

## ԲԱՍԱՐԴԵՉԱՐԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Չորրորդ սատիկանական շըջանի կենտրոնը համարվում է Իշասարգեցար գիւղը, որ հնումը կոչուել է Վասակաչէն.—(63<sup>0</sup>23'30"—40°11'15").—Գիւղը զգալի կերպով յառաջանում է և նման-ւում քաղաքի Տեղաւորուած է մի տափարակի վրայ, համանուն գետակի ափերին՝ բռնում է 41 դ. 880 ք. ս. տարածութիւն, ո-րից 41 դ. զրաւուած է շինութիւններով։ Կան մի քանի կանո-նաւոր փողոցներ, բաւական լաւ տներ, մօտ 20 խանութներ և արհեստանոցներ։ Գիւղի կենտրոնում գտնում է հայոց եկեղե-ցին, որ նոր են կառուցել, քանդելով հինք։ Սա բաւական գեղե-ցիկ է, սրբատաշ քարից, գմբէթաղարդ։

Հին եկեղեցու բեմի առջև եղել են գերեզմանաքար՝ հետե-ւեալ տապանագրերով։

Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի. թվ. Ռ  
(=1551).

Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին ՌԼԲ.  
(=1583 թ. Ք.).

Այս երկու վարդապետներին յիշում է Առաքել Դաւրիժեցին, տսելով որ սրանցից Յովհաննէսը Մարտիր երկրից էր, Թաղէսս առաքեալի վանքից, Հաղբատեցի Դուկաս մեծ վարդապետի ա-շակերտը. սրբասէր և զրասէր, որ շատ զրգեր էր զրել տուել, և եկեղեցու սպասներ և զարդեր շինել տուել. և որ «ՌԼԲ» թուա-կանին մերոյ հանգեաւ ի Քրիստոս. և մարմին նորա եղեալ կայ ի յերկիրն Գեղամայ ի գիւղն Վասակաչէն, հուալ զամբարանի վարդապետին Սարգսին<sup>1)</sup>։

ԺԴ—ԺԵ. դարերի թուականները կրող բազմաթիւ խաչերի մեծագոյն մասը արդէն կոտրատուած և շինութիւնների վրայ է դործածուած։ մի քանիսը միայն այժմ կանգնեցրած են եկեղեցու շուրջը։ Այս խաչքարերից մինի վրայ փորագրուած է.

Այս է նշան սուրբ Արարշին. ճրագ հոգոյն քաջ Զաւե-րապին, կանգնեցաւ ձեռամբ իւր հաւըն Ովաննէսին և իւր ծնողին Փաշախաթունին. յիշեցէք ի Քրիստոս։ Աստուած ողորմի Յովհաննէս աղին, Աստուած ողորմի Փաշախա-թունին ԶԵ (=1456 թ. Ք.).

Նոյն խաչքարի աջ կողմին՝

Աստուած ողորմի քաջ Զաւերապին.

<sup>1)</sup> Առաքել պատմագիր. ԺԴ. եր. 472. յիշ. Սմբատեանի Գեղարքունիքում եր. 603.

Զախ կողմին՝

Աստուծով մեք Ովհաննէս և եղբայրն իմ Դաւիթ կանգնեցաք զխաչերս բարեխաւս ծնողաց մերոց. ի թվ. Ռ. Ռ. (=1559. 1561 թ. թ.),

Երեսում է, որ հարիւր տարուց յետոյ այս խաչքարը վերցրած է իւր տեղից և գրուած մի ուրիշ ննջեցեալի վրայ, և առանց ջնջելու առաջին տապահագիրը, երկրորդը գրուած:

Բասարգէչարից գէպի արևելք, ազրիւրի «Ակներ» կոչուած տեղում կայ մի գիւղատեղի, ուր նկատելի են մի եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքար, սակայն առանց գրութեան: Այս տեղից էլ փոքր ինչ արևելք, թուրում նոյնպէս կայ մի գիւղատեղի, եկեղեցիով ու խաչքարերով, բայց առանց գրութեան:

Բասարգէչարի այժմեան բնակիչները հայեր են: Տաճկաստանի Դիակին գտաւոի Թաւլի, Աղբաղար և Սորանչի գիւղերից 1830 թ. գաղթած: Ընդամէնը 330 տուն, 1189 ար. 1183 իգ. միասին 2471 հոգի: Ունին պետական տարրական գալրոց:

Պարապում են երկրագործութեամբ և անամնապահութեամբ, առևտով և արհեստներով: Ունին 1894 դ. 2150 ք. ս. վարելանող, 435 դ. 860 ք. ս. խոտանեղի, 73 դ. 1360 ք. ս. արօտատեղի: 34 դ. 200 ք. ս. տարածութիւն էլ բռնուած է ջրով, որից 21 դ. 1400 ք. ս. գտնուած է ճահճի, 2 դ. ջրանցքների և 10 դ. 1200 ք. ս. գետակի տակ:

Թիւրիւլլու. Մի աննշան, փոքրիկ գիւղ է, Զախըլու գիւղից մի կիլոմետր գէպի հիւսիս: Գիւղում կայ մի հին եկեղեցի, որի շուրջը կան ժեղ-ժէ. դարերի տապահաքարեր: Բնակիչները հայեր են, Մշու Գանձասար գիւղից, 57 տուն. 224 ար. 216 իգ. միասին՝ 440 հոգի: Պարապմոնքը նոյնն է:

Զաղալու. (63°17'20"-42°11'12").—Տեղաւորուած է Սևանայ լին հարաւարեւմտեան ափին, հարթութեան վրայ, Մի քիչ հեռու ձգուած է բլրակների մի շարք, ամբողջովին պատած քարաժայերով: Գիւղը իւր այժմեան անունը ստացել է այն զաղաներից, քարայրերից, որ գտնուած են թէ վերոյիշեալ ժայռերի և թէ հարթութեան վրայ: Այստեղ է գտնուած Սարտուրի արքայի գրած սեպաձև արձանագրութիւնը<sup>1)</sup>:

Քացի կոսապաշտական գամբաններից, որոնցով շատ հարուստ է Զաղալուն, այստեղ կայ նաև քրիստոնէական ընդարձակ գեղեցմանատուն և մի եկեղեցու հիմնապատեր:

<sup>1)</sup>Տես պատմական տեսութեան մէջ:

Խաչնարերից մինի վրայ կարգացւում է.

Սուրբ խաչս բարեխաւու Միքանիկը կողակից... որդի  
տէր Ա... Միքան կազմող. թվին ՌՀԵ (—1628).

Դիւղը զուրկ է կանոնաւոր փողոցներից և լաւ տներից:  
Դիւղի միջով անցում է Նոր-Բայազէտից դէպի Բասարգէչար  
տանող ճանապարհը, որ այս մասում շատ քարքարոտ է:

Դիւղից մօտ կէս կիլոմետր հեռու գտնւում է մի հինաւուրց,  
հրաշալի աղբիւր, սակայն գիւղացիները շատ չեն օգտւում, չմիա-  
բանելով բերելու գիւղ, և խմում են լճի ջուրը, որ թէպէտ մա-  
քուր է, սակայն ձկի համ ունի:

Բնակիչները Ալաշկերտի Լաթար և այլ գիւղերից են, բա-  
րոյապէս շատ ընկած: Առանց ամաչելու տղամարդիկ և կանայք  
միմեանցից 3—4 մետր հեռաւորութեամբ լճում լողանում են:  
Ընդամէնը 131 տուն են, 488 ար. 496 իդ. միասին՝ 984 հոգի:  
Պարագում են գիխաւորապէս ձկնորսութեամբ, երկրագործու-  
թեամբ և անասնապահութեամբ: Սրանց հողերը Գեօտակ-բուլա-  
ղի հողերի հետ է ցուցակագրուած:

Զաղալուից գէպի արեւելահարաւ, մօտ երեք կիլոմետր հե-  
ռու կայ մի գիւղատեղի՝ երեք կողմից բլրակներով պատաժ: Եր-  
կու հայկական եկեղեցիների հիմնապատեր և մի քանի խաչքա-  
րեր գեռ ևս մնում են: Մի սապանաքարի վրայ էլ քանդակուած  
է մի թագակիր մարդ՝ շուրջը գրուած.

Այս է հանգիստ.

Դըրին-բուլախի, ճնումը Վարդաչն կամ Վարդանարակ \*) (630 23'  
30"—400 9' 32") . Այժմեան անունը՝ «Ղըրիս-բուլախ» , որ նշա-  
նակում է Թառասուն աղբիւր, յառաջացել է այն հանգամանքից,  
որ գիւղում բղխում են բազմաթիւ աղբիւրներ, որոնք սառնորակ  
են և գեղատեսիլ Գիւղը տեղաւորուած է մի քարքարոս բլրի  
ստորոտում, միայն առջևում տարածում է մի ընդարձակ, գեղե-  
ցիկ գաշտավայր, որի միջով ժաւալը լում է աղբիւրներից գոյա-  
ցած գետակը: Բնումը է 22 դ. 90 ք. ս. տարածութիւն. գրեթէ  
ամբողջովին պատաժ շինութիւններով: Գիւղում կայ մի եկեղեցի  
և Մեսրովի անունով. նկատելի են հին եկեղեցու, աների հետ-  
քեր, Բնակիչները հայեր են, չին Բայազէտի Ղարաքանդ գիւղից  
1830 թ. գաղթած. ընդամէնը 130 տուն. 627 ար. 578 իդ. միա-  
սին՝ 1205 հոգի: Պարագում են երկրագործութեամբ և անասնա-  
պահութեամբ. նոյնպէս նաև հաւաքութութեամբ: Ունին 1132 դ.

1) Հստ Ստ. Օբբելեանի.

2030 ք. ս. վարելահող, 344 դ. 1440 ք. ս. արօտատեղի, 5 դ. 40 ք. ս. էլ բանուած է ջրով, որից 3 դ. 20 ք. ս. լճի, 1 դեռ. ջրանցքների և 1 դ. 20 ք. ս. գետակի տակ:

Ղըրխ-բուլախ դիւղից հազիւ երկու կիլոմետր հեռու, բըւրակների գոգաւորութեան մէջ կայ մի գիւղատեղի, ուր գեռ ևս մուռմ են մի աւեր, փոքրիկ եկեղեցի, բաւականաշատ կարմիր, մեծ խաչքարեր, քառանկիւնի տապանաքարեր և մի մոխրակոյտ Գիւղում կայ երեք աղբիւր, որոնցից մինը խողովակներով բերուած է հեռուից: Ուշագրաւ է, որ դաշտերում փոքրիկ աւազաններ են շինուած եղել, ուր հաւաքուել էլայս աղբիւրների և անձրեի ջուրը՝ արտերը ջրելու համար գործադրելու:

Խաչքարերի տապանագրերից ուշագրաւ են.

**ԶԵԶ Թուին** (=1297 թ. Ք.), Խնա Այ. իշխնին Գրիգորոյ ևս Տաշուրակա որդի բազում ճահի տր կանգնեցի զիաշչս ինձ և ամուսնուն իմոյ Թամաթոյ ի փրկութեան հոգոց մերոց զի էաք անզաւակ. որք երկիրպագէք յադաւթս յիշեցէք:

Մի ուրիշ խաչքարի վրայ.

**Թվին ԶՂԲ** (=1543 թ. Ք.) Կամաւքն Այ մեք որդիքս Ռոկանայ Տը Գրիգորո Սուլթանս Աղէս կանգնեցաք որ խաչս տր Վարդանիսին իւր կողակից Արէվին. Ած ողորմի ամէն.

Մի ուրիշ խաչքարի վրայ.

Ես Սարգիս էրէց կանգնեցի զիաշչս հոգւոյ իմ և կողակցին իմոյ Մէլիք Խաթունին: Դ. որդիքն իմ փոխեցան ի Քս. Աւետարանի հրամանք է. ամէն ցաւէ փախացկ պիտի. մահովն տեսանք փախաց ասպրէց. մնածն մեռաւ: Աս բաւ է իմաստնոց. ի թուին Հայոց ՌԱ (=1552 թ. Ք.).

Մի տապանաքարի վրայ.

Ես Ղամարս հանգուցի տապանս կենայայքցին իմոյ Պրատիրին հայրիւր Քիրիգորին. թվ. ՌԾԵ (=1606 թ. Ք.):

Մի ուրիշ գերեզմանաքարի սէջ տեղում քանդակուած է մի քանայական գաւազան և գրուած է.

Այս է հանգիստ տր Սահակին. թվ. ՌՃԿԲ (=1713 թ. Ք.)

Նոր Ղըրխ-բուլաղի և այս գիւղատեղու միջն գտնուում է մի

ուրիշ գիւղատեղի ևս, Եղբարի Խարապա անունով, ուր նոյնպէս կայ մի աւեր եկեղեցի և մի քանի խաչքար, որոնցից երկուսի վրայ կան հետևեալ տապանազրերը.

Կամաւքն Ա. ևս Աղաբէկ կանգնեցի զխաչս. թվ. 2 (=1451).

Ես սարգաւակ Դաւիթս Աղաջան որդ դեղս կանգնեցի խչս հոգոյ իմոյ:

Կըզըլ-Բուլաղ կամ Զախըլու. (630 21' 30"-40° 10' 7").—Փոռւած է գեղեցիկ հարթութեան վրայ և րոնում է 14 դ. 1392 ք. ս. տարածութիւն. Գիւղը իւր առաջին անունն ստացել է այն հանգամանքից, որ ունի մի յորդ և յստակ աղբիւր. Սա անցնում է մի կիսաւեր, Բէթղէչէմ անունով եկեղեցու աւազանի տակով, այսպէս որ ժամանակին մկրտութիւնը հենց այս ջրի մէջ է կատարուել. Մի քիչ անցնելով՝ այս աղբիւրը դարձնում է ջրաղացներ, Բնակիչները շիա թուրքեր են, 192 տուն, 685 ար. 664 կգ. միասին՝ 1349 հոգի. Պարապմունքը նոյնն է: Ունին 174 դ. 1684 ք. ս. վարելահող, 717 դ. 2136 ք. ս. արօտատեղի:

Քեարքի-բաշ. (630 20' 20"-40° 11' 40").—Մի փոքրիկ, անշահան գիւղ է, Գիլլի լճակի մօտ. բնակիչները շիա թուրքեր են, 36 տուն. 167 ար. 139 իգ. միասին՝ 306 հոգի. Պարապմունքը նոյնն է:

Կանլի-Ըլահնվերդի. —Դաւնուում է Սկանայ լճի արևմտեան կողմը և տեղաւորուած է մի անանուն սարի լանջին: Այստեղ կայ մի աւեր եկեղեցի և մի ընդարձակ գերեզմանատուն, ուր գեռ ևս մնում են մի քանի խաչքարեր և բաւականաչափ քառանկիւնի և օրօրոցաձև գերեզմանաքարեր: Տապանազրերից կարդացւում են հետևեալները.

Մի օրօրոցաձև գերեզմանի վրայ.

Թիլին ԶՂԹ (=1550). Այս է հանգիստ մէլիք Թոնին, որ է որդի Ա..սքին որ ՂԱ. հասակի փոխեցաւ ի Քս:

Մի խաչքարի վրայ.

Մբ խաչս բարեխաւս Սմբաթ... որդի է վալին. թվին ՌՃԽ (=1691 թ. Ք.):

Այս է հանգիստ Շահումին կողակից Մկրտչին. թվին ՌՃԽ (=1696 թ. Ք.):

Մի ուրիշ գերեզմանաքարի վրայ.

Այս է հանգիստ Ատիսին որ է տարի առաջնորդ է կացեալ գեղոյս:

Գիւղի այժմեան բնակիչները շիա թուքեր են. 64 տուն, 226 ար. 219 իդ. միասին՝ 445 հոգի: Պարապմունքը նոյնն է,

Սուբրուտան.—(63°20'50"—40°7'2").—Մի աննշան զիւղ է, թրքարնակ, 58 տուն, 193 ար. 175 իդ. ի միասին 368 հոգի պարապմունքն էլ նոյնն է: Հողերն առանձնապէս չափուած չեն, այլ հաշուած են Գեօտակ-բոււղի հողերի հետ:

Քէֆլու.—Բլրակների մի երկար շղթայ ճգնում է Ղըռուլաղից դէպի արևելահարաւ և գնում հասնում է Ալա-գեօլլար լճին: Այս բլրակները Տաշքենա գիւղի մօտերքում մի կիսաշրջան կաղմելով՝ առնում են Զօդի քամու առաջը. հէնց այստեղ հիմնուած է Քէֆլու գիւղը: Առջնում տարածւում է մի ընդարձակ դաշտավայր, որի միջով հոսում է մի վտակ, որ ձմեռը կարւում է. զիւղացիները սափուած են լինում ձիւնը հալել և գործածել Գիւղը իւր անունը ստացել է այն հանգամանքից, որ զեղեցիկ դիրք և տեսարան ունենալով քէփ անելու տեղ է եղել: Բնակիչները շիա-քրդեր են. 27 տուն, 96 ար. 82 իդ. միասին 177 հոգի: Պարապմունքը նոյնն է:

Տաշքենտ.—(63°27'23"—40°7'26").—Տեղաւորուած է մի քարքարոս բլրի գագաթին, որի առջից հոսում է մի գհտակ: Բլրի գագաթին նկատելի են մի ամրոցի հետքեր, իսկ ստորոտում կան 15—20 բնական և արհեստական քարայրեր, որոնցից մինն այնքան մեծ է, որ իրբ ձիթահանք է ծառայել, ինչպէս երեսում է մինչև այժմ էլ նրա մէջ մնացած ձիթահանքի ահազին քարից: Միւս քարայրերը հաւանականորեն բնակարան են եղել, որովհետ նրանց մէջ կան թոնիբներ:

Հնումը այս գիւղը կոչուել է Քրդի-ալրը, և այստեղ դեռ ևս մնում են երկու հայկական եկեղեցիները: Սրանցից մինը, որ փոքր է և ունեցել է գաւիթ, գանուում է զիւղի մէջ. սազաշէն է, ու, տաշտած, մասամբ և անտաշ քարով շինուած: Անսիւն է, անխորան և միակ դռան կամարակալ քարի վրայ հրկաթագրով արձանագրուած է.

Կամաւն Աստուծոյ, յաշխարհակալութեան Աբաղայ խանին և յիշխանութեան մեծին Հասանայ՝ մեք որդիք հայր Անանիայ՝ անարժան քահանայ Ստեփաննոս և երեք եղբարք մեր Զունիաթ, Սասուն և Վահրամ շինեցաք զեկեղեցիս սուրբ Աստուածածնայ և զժամատունս ի հալալ արգեանց, ի փրկութիւն հոգւոց մերոց. և ի վայելումն զաւակաց մերոց: Աղաչեմ, ժառանգաւորք, և սպասաւորք եկեղեցւոյս յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր:

Նոյն դրան աջ կողմին.

Յանուն Աստուծոյ ես Մամքան Քրիգորոյ՝ զՁորի ջաղացն, զՃալի հոդն, Ստեփաննոսի ջաղացադրան խոտատեղն, սուրբ Աստուծածնիս տուաք. Ստեփաննոս սահմանեաց ճրագալուցի յայտնութեան Ք. Ժամն պարոն Հասնայ, որ խափանէ դատի ի Տեառնէ:

Այս եկեղեցու առջև կանգնած է մի խաչքար, որի վրայ դրուած է.

Թվ. ՆՂԵ (=1046թ.) ես Քրիգորս Քարամի<sup>1)</sup> որդի կանգնեցի զիսաչս:

Եկեղեցու աջ կողմում, փոքր ինչ հեռու, միմեանց կից կանգնած են մի մեծ և երկու փոքր սև խաչքար, մեծի վրայ գըրուած է.

Սբ խչս բարեխաւս Աստիպէկին. Անանիայ կազմող խչիս. թվ. ՌՂԸ (=1559).

Այս խաչքարի յետեռում՝

Կմւն Այ ես Պալիս կանգնեցի խաչերս յիշատակ հաւրն իմ Գոկին որդոյն Աստիպէկին. թվին ՌՂԸ.

Զախ կողմի փոքր խաչի վրայ.

Սբ խաչս բարեխաւս Գոկին. թվին ՌՂԸ.

Նոյն խաչի յետեռում.

Սբ խչս բարեխօս հօրն իմոյ Պալին եւ մաւրն իմոյ չուռումսինին յիշեցէք ի Քս. ի թվին Հայոց ՌՃՇԵ (=1666).

Եկեղեցու աջ կողմի պատին կից կանգնած է երկու մետրանոց մի սև խաչքար, որի վրայ գըրուած է.


Ած ողորմի պլր Դասումճանին. ՌՃՇ թվ. (=1567):

Սրա մօտ կայ մի փոքր խաչքար՝

Ած ողորմի պլր Խանպէկին ամէն. թվ. ՌԾՋ (=1607):

Այս երկու խաչքարի յետեռում կայ մի օրօրոցաձև խաչքար, որի արևելեան ճակատին քանդակուած է մի արծիւ՝ ճանկերի մէջ մի գառ բռնած. Տաղանաքարի հիւսիսային երեսին քանդակուած է մի զինուած մարդ՝ ձիու մօտ կանգնած. մի մարդ էլ գինու գաւը ձեռին, մի քիչ հեռու թոշուներ և եղջերուներ. Հա-

1) Քարամ կամ առաւելապէս Քերիմ անունը Սենե-Քերիմ անուան կը ճատում է, որ այժմ էլ շատ գործածական է:



քաւային երեսին՝ մի խաչ, մի մարդ, թառ ածելիս, մօտն էլ հաց և մի ուրիշ մարդ՝ ձեռին գաւ բռնած, Վերենում գրուած է.

**Այս է հանգիստ Գուլապին թվ. Ռ (=1551).**

Եկեղեցու առջև կանդնած մի ուրիշ խաչքարի վրայ կարգացուում է.

**Ած ողորմի Մաղաքին:** Ազ. ես Ամիրպարս կանգնեցաք խչերս բարեխաւս եղբարցն իմոց Մաղաքին Անտիպարին:

**Մի ուրիշ խաչքարի վրայ.**

**Ազ ես Տէր Զագարէս կանկնեցի զխաչս բարէխաւս հաւըն Տը Մէլքյսէթ քհնին եւ մաւր իմ Շահնապին եւ որդոցա:**

**Մի ուրիշ, օրօրոցաձև տաղանաքարի վրայ գրուած է.**

**Այս է հանգիստ Աւաքին, որ է որդի Բարսեղ քհնին:**

**Միւս եկեղեցին գտնուում է դիւղի արևելեան ծայրում:** Սա ևս սագաշէն է, ոև քարով շինուած, անսիւն և անխորան, միայն հիւսիսային պատի մէջ բացւում է մի դուռն, որ տարել է դրաւ աշինուած և այժմ կործանուած խորանը. Ունի միայն մի դուռ, որի կամարակապ քարի վրայ տրծանազրուած է.

**Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան տէր Գրիգորոյ, յիշխանութեանս Հասանայ և Մամքանայ և Գրիգորոյ և Ասփէին մեք միաբան եղբարքս Ուհան, Սարգիս և Ոհանէս և ամուսինք մեք շինեցաք զկաթուղիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց:**

**Նոյն եկեղեցու պատի մէջ ամրացրած է մի խաչքար՝ հետեւալ արձանագրութեամբ.**

**Թվ. Նկ (=1011) ես Յոհաննէս կանգնեցի զխաչս:**

**Մի ընդարձակ գերեզմանատուն ընկած է դիւղից դուրս. Խաչքարերի մեծագոյն մասը կոտրուած է. տաղանաքարարերը տարսուած են շինութիւնների վրայ գործադրելու: Այժմեան գիւղի տների մեծագոյն մասը կիսազետնափոր զլիսատներ են, նոր շինուում են կանոնաւոր սենեակներ, և զիւղը բլրի զագաթից իշնում է դէպի ստորոտը, հարթ, գեղեցիկ տեղը: Բնակիչները շիա թուրքեր են Ղազախի Ալի-բակի և Գլզըլ Հաճըլը զիւղերից զաղթած: Ընդամէնը 221 տուն են, 426 ար. 370 իգ. միասին՝ 976 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Սրանց ունեցած հողը ցուցակագրուած է Հուսէին-դուլի**

աղալուի հողերի հետ։ Հողը սեանող լինելով, անձրեային տարի-ներին հացանատիկերի ցողունը սաստիկ բարձրանում է՝ ի գնաս հասկի, իսկ երաշտ ժամանակ այրւում։ Սաստիկ քամի շարունակ փչելու պատճառով ցորւթը շատ անգամ տանում է բերքը, կարկուտը խփում, մուլքը կտրում, —այնպէս որ գիւղացիների դրութիւնը այնքան էլ նախանձելի չէ։ Այստեղի կանայք շատ լաւ դորդեր և կապերտներ են դործում։

Եորջարու կամ նոր-Քեթի. (63°30'25"—40°6'47")։ — Թրքաբնակ մի աննշան գիւղ է, ուր նոյնպէս կայ մի աւել եկեղեցի, որի խորանի մօտ մի խաչքարի վրայ զրուած է։

«Սուրբ նշանս Շահում աղին է»։

Մի ուրիշ խաչքարի վրայ էլ՝

Սուրբ խաչս բարեխաւս Մաթոսին և կողակցին։

Դրսում մի խաչքարի վրայ։

Այս է հանգիստ Փիրիմին։

Եորջալու գիւղի միջով անցնում է Դիլի գետը, Բնակիչները թուրքեր են 86 տուն, 372 ար. 349 իգ. միասին 721 հոգի։ Պարապմունքը նոյնն է. սրանց հողերն էլ հաշուած են Հուսէին-դուլի-աղալուի հողերի հետ։

Պարի-Եաղուր. (63° 28' 15"—40° 10' 2")։ — Տեղաւորուած է մի ըլլի լանջին, առջևից, ձորի միջով հոսում է մի գետակ, որ սկիզբն է առնում թեթի-սարից և անցնելով կայա-Բաշի գիւղի առջևով թափում Մաղրա-գետի մէջ։

Գիւղը ուշադրութեան արժանի ոչինչ չունի։

Բնակիչները շիա թուրքեր են. 84 տուն, 315 ար. 270 իգ. ընդամենքը 585 հոգի։ Պարապմունքը նոյնն է։

Զախըրլու կամ Ղոզլ-բուլաղ. (63° 21' 30"—40° 10' 7")։ — Վերջին անունը՝ Ղոզլ-Բուլաղ (ոսկի աղբիւր) գիւղն ստացել է այն սառնորակ աղբիւրից, որ ըղինելով թեղղենէմ կոչուած այժմ կիսաւեր եկեղեցու մօտից՝ անցնում է նրա աւազանի տակով, այնպէս որ մկրտութիւնը հէնց այդ ջրի մէջ են կատարել։ Աղբիւրը շատ յորդ է և մի քանի ջրաղացներ է դարձնում։ Գիւղը բռնում է 14 դ. 1392 ք. ս. արածութիւն, որից 12 դ. 720 ք. ս. գտնուում է շինութիւնների տակ։ Բնակիչները շիա թուրքեր են. 192 տուն, 685 ար. 664 իգ. ի միասին 1349 հոգի։ Պարապմունքը երկրագրծութիւնն ու անսանապահութիւնն է. Ունին 1741 դ. 1684 ք. ս. վարելահող, և 717 դ. 2136 ք. ս. արօտատեղի։

Կայա-պաշի. (62° 14' 35"—40° 35' 10")—Հրաշալի դաշտավայրի վրայ բարձրանում է մի ընդարձակ բարաժայռ, որի հարթգագաթին գետեղուած է Կայա-պաշի գիւղը։ Դաշտի միջով, գիւղի առջնից ոլորապառյա հոսում է Քէթի գետը, որ այս գիւղին ևս ջուր է մատակարարում, որովհետեւ դիւղում ոչ մի աղբիւր չկայ։

Գիւղի տները կիսագետնափոր են և միայն այժմ շինուուն են կանոնաւոր սենհակներ։ Բնակիչները շիա այրումներ են, Փամբակի Հալլաւար գիւղից գաղթած։ Ընդամէնը 38 տուն են, 109 ար. 110 իգ. միասին՝ 219 հոգի։ Պարապմունքը նոյնն է։

Հուտէին-դուլի-Աղալու։ (63° 29' 10"—40° 11' 5")—Զետեղուած է մի դաշտավայրի վրայ, որի միջով հոսում են Քէթի և Ղարադոյի գետակները։ Մի հայկական եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքարեր, որոնց մեծագոյն մասը կարատուած է, ցոյց են տալիս, որ հնումը հայոց գիւղ է եղել, թէպէտ և անունը յայտնի չէ։

Այժմեան բնակիչները շիա թուրքեր են՝ 105 տուն, 408 ար. 370 իգ. միասին՝ 778 հոգի։ Պարապմունքը նոյնն է։

Կոշա-բուլաղ. (63° 27' 20"—40° 10").—Մի վոգրիկ, աննշան գիւղ է, որ իւր անունը սատցել է երկու (զոշա) աղբիւրի մօտ լինելու պատճառով, Բոնում է 4 դ. 1920 ք. ս. տարածութիւն։ Բնակիչները շիա քրդեր են, 26 տուն, 130 ար. 132 իգ. միասին 262 հոգի։ Պարապում են անամանապահութեամբ և երկրագործութեամբ։ Ունին 731 դ. 1632 ք. ս. 5 դ. 672 ք. ս. խոստափելի և 68 դ. 880 ք. ս. արօտատեղի։

Մեծ Արագոլընլու։ (63° 31' 25"—40° 9' 24")—Թրքաբնակ մի աննշան գիւղ է, որի մէջ կայ մի աւեր եկեղեցի, իսկ մօտիքի վերայ մի գերեզմաննատուն, ուր կան մի քանի խաչքարեր հետեւեալ տապանագրերով։

Այս է հանդիսատ Խուդանի որդի պարոն Իւանին. թվ. ՌՃիկ (—1678 թ. Ք.)

Շնորհիւն Առառուծոյ ես տէր Մովսէս. բէյ և աղա գիւղիս. միաբան կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս տէր Սահակին, հաւըն իւրոյ Միր Հաւրային, թոռն իսրայէլին. յիշեցէք ի Քրիստոս։

Միւնոյն խաչի արևմտեան երեսին.

Սուրբ խաչս բարեխաւս Սահակ կազմողին. թվին ՌՃիկ (—1698 թ. Ք.)

Այժմեան բնակիչները թուրքեր են. 71 տուն, 248 ար. 258 իդ. միասին 506 հոգի. Պարագաւունքը նոյնն է:

Ղարաղողինուու Փոքր.—(63° 30' 15"—40° 9' 10"): Մի փոքրիկ աննշան գիւղ է, 28 տուն թուրք բնակչով, 140 ար. 113 իդ. միասին 253 հոգի:

### ՄԱԶՐԱՅԻ ԳԻՒՂ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ-Մազրա.—(63° 25' 45"—40° 13' 10").—Տեղաւորուած է զեղեցիկ հարթութեան վրայ, համանուն գետի ափին. Բռնում է 15 դ. 864 ք. ս. աարածութիւն։ Այժմ համանուն համայնքի կենտրոնական գիւղն է. կան մի երկու կանոնաւոր տուն, մատցները շատ հասարակ են։

Հնումը Մազրան եղել է մելիքանիստ, այստեղ 1601 թ. Մելիք Շահնազարը հիւրնկալել է Շահ-Ապասին և նրանից մելիքութեան պաշտօնի մէջ վերահաստատուել։

Նախկին շինութիւններից մասցել են մատրան և մի եկեղեցու հիմնապատեր, հարիւրից աւելի խաչարձաններ՝ մասամբ ցրուած, մասամբ էլ խմբուած մի ընդարձակ գերեզմանատան մէջ։

Գիւղի արևելեան ծայրում, ուր երբեմն բարձրացել է մի փոքրիկ մատուռ, ուր ևս կանգուն է մի հազարամետ սկզբանաւոր, լայնութեան, կրելով հետևեալ արձանագրութիւնը։

81 (=881) թուականութեանս տանս Հայոց ես Գրիգոր Ամիր Ներսէն և տանս Սիւնեաց և Աղուանից իշխան կանգնեցի սուրբ Նշանս աւզնականութիւն հաւատացելոց, որք երկրպագէք սուրբ խաչին Քրիստոսի զիս յադութս յիշեցէք։

Այս խաչքարի մօտ կայ մի ուրիշ, հասարակ խաչքար՝ վայր ընկած, որի մէջքին գրուած է.

Ես Ամիրդատո կանգնեցի տապանս հաւը իմոյ Գօրգայ, մաւր իմոյ Մամշահի։ Ով կարդէք յաղաւթս յիշեցէք։

Եկեղեցին գտնում է գիւղի հարաւային կողմում, այժմ կիսաւեր՝ իբր յարդանոց է ծառայում։ Այնտեղ մնում են միայն հետևեալ երկու արձանագրութիւնները։

Արևմտեան պատի մէջ ամրացրած մի խաչքարի վրայ.

Որդիք Փիրհամզին կանգնեցաք խաչերս բարեխաւս ծնողաց մերոց։ Աստուծով. եղբարքս Սատիս, Եղիշայ